



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը

Համառոտ եռամսյակային զեկույց

2010 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր

2010 թվականի աշնան և ծմռան շրջանում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավման գործընթացը կառավարական մակարդակով շարունակում էր սառեցված մնալ, իսկ երկու երկրների քաղաքական և քաղաքացիական հասարակության առաջնորդները բավականին հոռետես կարծիքներ էին հայտնում արձանագրությունների վավերացման ներկայիս գործընթացի հնարավոր հաջողության վերաբերյալ: Բոլորը գիտակցում են, որ 2011 թվականի հունիսին Թուրքիայում, իսկ 2012 և 2013 թվականներին նաև Հայաստանում գործող իշխանությունները ծանրաբեռնված կլինեն անցկացվելիք ազգային ընտրություններով, ինչն էլ ավելի կսահմանափակի հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու հարցում քաղաքական մանևրման հնարավորությունները: Երկու երկրներում ընթացող քաղաքական դիսկուրսում գերակշռող կարծիքներից կարելի է եզրահանգել, որ կողմերից ոչ մեկը չպետք է դադարեցնի արձանագրությունների ներկայիս ձևաչափը, նույնիսկ եթե դա նվազեցնում է հարաբերություններն ավելի կարճ ժամկետում բարելավելու հավանականությունը: Միաժամանակ, երկու երկրներում էլ քաղաքացիական հասարակության որոշ առաջնորդներ վիճարկում են այս մոտեցումը՝ բերելով այն փաստարկը, որ ծախսողման դատապարտված արձանագրությունների գործընթացի դադարեցումը կխրախուսի քաղաքական բանակցությունների մի նոր ալիք, որը գուցե քաղաքական շահարկումներից զերծ մնալու և հաջողությամբ պսակվելու ավելի մեծ հավանականություն կունենա:

Չնայած քաղաքական փակուղուն՝ երկու երկրների միջև հանրային դիվանագիտության նախաձեռնություններն աշխուժացել են: Ձեռնարկվել են մի շարք փոքր և մեծ երկկողմանի ծրագրեր, որոնք իրականացվում են կառավարական մակարդակով մերձեցման գործընթացի ձախողման պահից: Մերձեցման գործընթացը սատարող ամենախոշոր նախաձեռնություններից մեկը՝ Աջակցություն Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը ծրագիրը, մեկնարկեց 2010 թվականի հոկտեմբերին: Ծրագիրն իրականացվում է կոնսորցիումի կողմից, որտեղ ընդգրկված են Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնը, Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը, ինչպես

նաև Երևանի մամուլի ակումբը՝ ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ: Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ ունի հիմնական գործընկեր թուրքիայում:

Ծրագրի իրականացման առաջին եռամսյակում արդեն իսկ մեկնարկել են մի շարք նախատեսված և արտահերթ գործողություններ, որոնց ելքային արդյունքները լրացնում են այլ հասարակական նախաձեռնությունները և ստեղծում այն միջավայրը, որում հանրային երկխոսության գործընթացը զարգանում է: Ծրագրի բիզնես ուղղության խոշոր նախաձեռնություններից մեկն իրենից ներկայացնում է համալիր հետազոտություն, որում ներառվել են 200 ընկերություններ՝ 140-ը Հայաստանից, իսկ 60-ը թուրքիայից: Այս հետազոտության արդյունքների հրապարակումն ակնկալվում է մինչև 2011 թվականի մայիսը: Նմանապես, ծրագրի՝ քաղաքացիական հասարակության ուղղության շրջանակներում մեկնարկել է լրատվամիջոցներում Հայաստան-Թուրքիա հարաբերությունների լուսաբանման միտումներն ի հայտ բերելու հետազոտություն: Որոշակի նախնական քայլեր են արվել Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրային համագործակցությունը խթանելու ուղղությամբ, ինչպես օրինակ՝ օգնել շահագրգիռ հայ արտադրողներին իրենց թուրք գործընկերների հետ հնարավոր կապեր հաստատել, ինչպես նաև մշակել իրավաբանական միջոցառումների ու ընթացակարգերի վերաբերյալ մի ուղեցույց՝ նախատեսված հարևան երկրում տնտեսական գործունեություն սկսելու ցանկություն ունեցող հայ և թուրք գործարարների համար: Մեկ այլ առանցքային միջոցառման շրջանակներում՝ «Facebook» սոցիալական ցանցում բացվեց «4-րդ ալիք. Թուրքիա-Հայաստան» էջը, որտեղ ներկայացված են տեղեկություններ Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ: Հայ-թուրքական նորարար նախաձեռնությունները սատարելու նպատակով՝ 2011 թվականի հունվարին հայտարարվելու է փոքրածավալ՝ 3 000-ից 20 000 ԱՄՆ դոլարի չափով դրամաշնորհների հայտերի ընդունման հրավեր: Դրամաշնորհները մրցակցային կարգով հատկացվելու են հայկական և թուրքական համագործակցող կազմակերպություններին:

Եռամսյակը նշանավորվեց նաև տարբեր հատվածների ներկայացուցիչների միջև շփումները խրախուսող մի շարք հանրային միջոցառումներով: 2010 թվականի նոյեմբերին ձևաչված թուրք հանրային ձեռներեց Օսման Քավալան հանդիպում ունեցավ հայ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և գործարարների խմբի հետ: Մեկ այլ կարևոր միջոցառում էր 2010 թվականի դեկտեմբերի 16-ից 17-ը Ստամբուլում անցկացված խորհրդատվական համաժողովը, որը կազմակերպվել էր Կոլումբիայի համալսարանի խաղաղարարության և իրավունքների ծրագրի հետ համատեղ, և որին մասնակցեցին հայկական, թուրքական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ժողովն էապես նպաստեց ծրագրերի միջև համատեղ գործունեության կայացմանը, հաջող ռազմավարությունների մշակմանը, ինչպես նաև գործընկերների միջև և ծրագրված գործունեության շրջանակներում երկուստեք ամրապնդվող կապերի ստեղծմանը: Մասնակիցները նաև ներկա գտնվեցին Շվեդիայի հյուպատոսարանում անցկացված ընդունելությանը, ինչպես նաև մասնակցեցին մի շարք մշակութային

միջոցառումներին, այդ թվում՝ «Անադոլու Քուլտուր» և «Հազարաշեն» ՀԿ-ի կազմակերպած «Խոսելով միմյանց հետ» ցուցահանդեսին, ինչպես նաև «Անադոլու Քուլտուր»-ի կազմակերպած Կոմիտաս Վարդապետի երաժշտության մեծ համերգին: Մի շարք թուրք և հայ երաժիշտներ ու երգիչներ ելույթ ունեցան մոտ երեք հազար հանդիսատեսի առջև, որոնց թվում էին Թուրքիայի մշակույթի նախարարը և Սևծովյան տնտեսական համագործակցության կազմում ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչը:

Հաշվի առնելով հայ-թուրքական հարաբերությունների փոփոխական միջավայրը՝ հարկ է որոշակի ձկունություն պահպանել ծրագրի շրջանակներում, որպեսզի հնարավոր լինի ծրագրավորված գործունեությունը հարմարեցնել առկա փոփոխություններին և առավել բարձր ազդեցություն ապահովել: Մտապահելով այս իրողությունը և ելնելով առաջին եռամսյակի իրադարձություններից՝ որդեգրվել են որոշ լրացուցիչ մոտեցումներ: Օրինակ, ներգրավվելու է արտաքին խորհրդատու, որը հարցազրույցներ կանցկացնի երկու կողմերի հիմնական շահառուների ներկայացուցիչների հետ և կկազմի իր հետազոտության համալիր զեկույցը, որտեղ կներկայացվեն փոքր կամ միջին մասշտաբի փոփոխություններ մտցնելու ներուժ ունեցող մտքեր, որոնք կարող են իրականացվել նույնիսկ երկու կողմերի միջև դիվանագիտական հարաբերությունների բացայակության պայմաններում: Վերջին զարգացումներով պայմանավորված մեկ այլ հրատապ կարիք կա, այն է՝ կազմել ներկայումս իրագործվող կամ վերջերս իրականացված հայ-թուրքական ծրագրերի ցանկը: Հետազոտության ավարտին կանցկացվեն մի շարք հանդիպումներ ներկայումս երկու երկրներում նման ծրագրերում ընդգրկված բոլոր ցանկացող հայկական և թուրքական կազմակերպությունների համար՝ գիտելիքների փոխանակման և փոխադարձ աջակցության նպատակով:

ԱՄՆ ՄՁԳ-ն և կոնսորցիումի անդամներն աջակցում են Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը՝ խթանելով քաղաքացիական հասարակության համագործակցությունը, հիմնելով գործարարների և պրոֆեսիոնալների ցանցեր և զարգացնելով եղած համագործակցության օրինակները, ինչպես նաև սատարելով երկու ժողովուրդների միջև փոխըմբռնման ձեւավորմանը և խորացմանը, տարածաշրջանում խաղաղության և տնտեսական ինտեգրման հասնելու նպատակով:

